ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1. 1964 Общественные науки

Ս. Գ. Բարխուդարյան

ՏԱՊԱՆԱԳԻՐ ՀԱՄԱՄ ԻՇԽԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

Ադրբեջանի պետական պատմական թանգարանի բակում պահվում է մեջտեղից կոտրված մի տապանաքար։ Սրա վրա կա չորս տողից բաղկացած հայերեն արձանագրություն—տապանագիր, որը քարի կոտրված մասի շրթունքների մոտ խիստ ջարդոտված է (մանավանդ առաջին երկու տողերի մասում) և բնդհանրապես խիստ հողմնահարված, մաշված։

Տապանաքարը թանգարան է տեղափոխվել Աղդամի շրջանի Սոֆուլու գյուղի մոտ գտնվող Գյավուր ղալա կոչված ավերակներից։

Հնագիտական այդ վայրը ունի պատմական մեծ անցյալ. հայկական մատենագրական աղբյուրներից հայտնի է, որ այդ վայրում եղել է քաղաքատիպ մի ավան Տիգրանակերտ անունով։ VII դարի պատմագիր Սեբեոսը, նկարագրելով պարսկա-բյուզանդական պատերազմները, հիշատակում է բյուզանդական կայսր Հերակլի մինչև Փայտակարան հասնելն ու այստեղ պարսից բանակի հետ ունեցած նրա պատերազմները։ Պատերազմը տեղի ունեցած վայրը ներկայիս Աղդամի շրջանն է հանդիսացել, որտեղ և պատմագիրը հիշատակում է Տիգրանակերտ անունով երկու ավաններ։

Գյավուր ղալան հենր դրանցից մեկն է։ XIX դարի ճամփորդ Ջալալյանը այդ ավերակները մեծ քաղաքատեղ է համարում, ուր կիսավեր վիճակում կային տների, շուկաների և բաղնիքների ավերակներ, այդ վայրը տեղացի հայերն անվանում էին Թդրնակերտ, իսկ ադրբեջանցիները Թառնակերտ[1]։ Այդ ավերակների մասին նույնպիսի նկարագրություն ունի նաև Մ. Բարխուդարյանցն իր «Արցախ» հայտնի գրքում[2]։

Հիշյալ տապանաքարը երկթեք է, երկար և ցածրանիստ։ Մեր տեսած և ուսումնասիրած նման ձևի բազմաթիվ տապանաքարերն ապացուցում են, որ ձևը հնագույնն է։ Կովկասում կուրդանային-գոլմենային և կրոմլեխային ակնառու թաղումներին հաջորդեցին ստորերկրյա քարարկղային, ապա կարասային և այլ նման տիպի թաղումներ, որոնց հիմնական հատկանիշն այն էր, որ դերեզմանի վերերկրյա մասը մնում էր աննշան։ Այդպիսիներից էր նաև միակտոր քարից շինված սարկոֆագների միջի թաղումները։ Բայց այս վերջիններիս վրա նույնպես միակտոր քարից շինվում էր կափարիչ, որը երբեմն երկթեք ձև ուներ։ Հաճախ այդ կափարիչը մասամբ արտաքուստ տեսանելի էր լինում (թերևս հողմնահարության հետևանքով բացված)։ Միակտոր քարից երկթեք այդ քարը, որն սկզբում միայն կափարիչի դեր էր կատարում, աստիճանաբար անջատվում է սարկոֆագից և դառնում ինքնուրույն տապանաքար։ Այս դեպքում, բնականաբար, նա մի քիչ ավելի բարձր էր շինվում, քան կափարիչը. տապանաքարի այս ձևը առաջին դարերից սկսած մինչև X դարը Հայաստանում շատ տարածված էր։

Թեև տապանագիրը եղծված է և վերծանվում է որոշ բացերով, բայց նրա առաջին տողերի վերջում մնացել է Համամ իշխանի անունը, հետևաբար, տապանագրի իմաստը ըմբռնելու և հնարավորին չափ ամբողջացնելու համար անհրաժեշտ է փոքրիկ պատմական էքսկուրս կատարել Համամ իշխանի անձնավորության ու գործունեության վերաբերյալ։

Համամի մասին հայկական մատենագրության մեջ բավականին շատ հիշատակություններ կան։ Ըստ դրանց նա անվանվում է «Համամ մեծ իշխան արևելից» Բագրատունի ցեղից։ Նրա ազգայրների, ինչպես և զավակների մասին տեղեկություններ չկան։

Համամ իշխանը նշանավոր դեր է կատարել Աղվանքի պատմության մեջ։ IX դարի վերջերին՝ երբ Արաբական խալիֆաթի թուլության հետևանքով վարվում էր նոր քաղաքականություն, դահեր էին տրվում տեղական ուժեղ վասալ իշխաններին. Համամն էլ թագ ստացավ և, նստելով Աղվանքի հին մայրաքաղաք Պարտավ-Բերդեյում, վերականգնեց Աղվանից թագավորությունը (փաստորեն նրա իշխանությունը տարածվում էր Աղվանքի մի փոքր մասի վրա)։

---

1 Ս. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Բ, Տփխիս, 1858, էջ 344—345։

2 Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 28։

Համամի կենսագրության մեջ մի կարևոր դեպք կա, որը խոշոր նշանակություն է ունեցել նրա հետագա գործունեության համար և առիթ է տվել, որ նոր ժամանակների բանասերները շփոթ մտցնեն նրա կենսագրության մեջ, բայց որի արտահայտությունը գտնում ենք նաև ներկա արձանագրության մեջ։ Դա հետևյալն է.

Պատմագիրներից[3] և իր իսկ Համամի կողմից գրված բանաստեղծական աշխատությունից[4] հայտնի է, որ նա մահվան սպառնալիքի տակ ստիպված է եղել սպանել իր հարազատ եղբորը։ Թե ինչո՞ւ է արաբացի Բուղա ոստիկանը նրան ստիպել դիմելու այդ ոճրագործությանը, մնում է անհայտ։ Եղբորն սպանելուց հետո Համամը զղջում է իր արարմունքը և մեղքը քավելու համար բազմաթիվ բարեգործություններ անում, գրում նաև հինգ տնից բաղկացած մի բանաստեղծություն, որի մեջ խոստովանում է իր հանցանքը և թողություն հայցում աստծուց։ Բանաստեղծության տների սկզբի տողերի սկզբնատառերը կազմում են Համամ անունը։

Այս վերջին փաստը, այսինքն Համամ իշխանի նաև բանաստեղծություն գրած լինելը, առիթ է տվել նոր ժամանակի բանասերներին Համամ իշխանին և նույն IX դարում ապրած մի այլ, վարդապետ Համամին նույնացնելու և վերջինիս բոլոր գրական վաստակները Համամ իշխանին վերագրելու. միաժամանակ այդ գրական գործերի բովանդակության կրոնական բնույթը նկատի առնելով՝ համարել են, որ Համամ իշխանը եղբորն սպանելուց հետո զղջացել է և հրաժարվելով գահից՝ կրոնավոր դարձել, ընդունել Հովհաննես անունը։

Բայց այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսին են Հ. Աճառյանը[5] և Ն. Ադոնցը[6], համամիտ չեն այդ կարծիքին և ընդունում են, որ Համամ թագավորին ժամանակակից ապրել է մի այլ, նույնանուն գիտնական մարդ, որը և գրել է մի շարք հոգևոր երգեր։ Այս վերջին կարծիքի ճշտության լավագույն փաստն է և այն, որ Ղազանչի-Ավետարանոց գյուղում ժամանակին հայտնաբերված Համամ իշխանի տապանաքարի վրա գրված է Համամ թագաւոր[7]։

Այս բոլորի մեջ ճշմարիտ մնում է այն, որ Համամ թագավորը իրոք հարկադրաբար սպանել է իր եղբորը և այդ առթիվ գրել իր զղջական բանաստեղծությունը։ Համամ թագավորի կենսագրական տեղեկություններից մեր նյութի համար կարևոր է և այն, որ նրան հաջորդել է իր թոռը՝ Իշխանիկը. այս հանգամանքը կարող է ենթադրել տալ, որ Համամը արու զավակ կամ եղբայրներ չի ունեցել։

Այժմ վերադառնանք բուն տապանագրին։ Նրա բոլոր չորս տողերը գրված են իրար տակ և տեղավորված են հարթության մի երեսին։ Առաջին տողի սկզբից գրված է խաչի նշան, որը սովորական է հայկական արձանագրությունների համար և ցույց է տալիս սկիզբը, եթե սկզբում է գրված, վերջ՝ եթե արձանագրության վերջում է գրված։

Առաջին տողի սկզբում պահպանված է այս բառը, լրիվ, որին հաջորդում է մեկ տառ Դ, ապա միջտեղի մասը ջարդոտված է և վերջում միայն որոշ են ամամ իշխանի բառերը։

Միջնադարյան հայկական տապանագրի սովորական և շաբլոն սկիզբը երկու ձև ունի այս է հանգիստ կամ այս է տապան, բայց ներկա դեպքում այս բառին հաջորդում է ոչ թե է տառը, որը լական բայն է, այլ Դ տառը, հետևաբար, պետք է որոնել մի ուրիշ շաբլոն։ Ավելի հին դարերի տապանագրերը սկսվում էին այս դիր ձևով։ Բոլոր այս երեք ձևերն էլ ունեն միևնույն իմաստը, այն է՝ գերեզման. այս շաբլոնին պետք է հետևի թաղվածի անունը, որը, սակայն, հնարավոր չէ վերականգնել։ Տողն ավարտվում է ամամ իշխանի բառերով։ Համամ անվան միայն սկզբի Հ տառն է պակասում, որի լրացումը կասկածի տեղիք տալ չի կարող։

Երկրորդ տողի սկզբից կարդացվում է Եւ տճ Փդիպեի Եւ տճ Սճսյատա բառերը, ապա կենտ-

---

[3] Մովսէսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Գ, Թիֆլիս, 1913, էջ 283։

[4] Կ. Կոստանեանց, Համամ Արևելցի, «Արարատ», 1896, էջ 169։

[5] Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հ. Գ, էջ 23—24։

[6] Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, Փարիզ, 1948։

[7] Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 98։ Նույն գերեզմանատան մեջ եղել են զույգ տապանաքարեր, դրանցից մեկի վրա պատկերված է թագուհին՝ նստած ձիու վրա, որը չի ունեցել արձանագրություն. կողքին մի այլ տապանաքար, վրան թաղազարդ հեծյալ, ձեռքին խաչ, բացի դրանից քանդակված է երախը բաց մի վիշապ։ Տապանաքարի մյուս երեսին խաչեր են, իսկ երեսին՝ ի։ող, (1241) ՃճՃեց... ճա... թգաւորի աղվց.... ես տէր Սասուճ գրեցիՃ այս, ով որ կարդէ աստուած ողորմի ասէ. պարզ է, որ տեր Մասունը նորոգել է այդ թվին Համամի տապանաքարը։ 1961 թ. ամռանը վիմագրական գիտարշավը եղավ այդ գյուղում, բայց հայտնաբերել այդ տապանաքարերը չհաջողվեց, հավանաբար արդեն ոչնչացվել են։

րոնում ջարդված ու եղծված են, իսկ վերջում պարզ են եւ զրկ տառերը, որոնց շարունակությունը 3-րդ, համարյա լրիվ տողի հետ կարդացվում են եւ զրկ(եալ ի Նորտ ճասակէ ելա յաշխարհէս դառն թողի սուգ). զգիրս զայս:

Չորրորդ տողն ամբողջական է և տապանագրերի համար անսովոր հետևյալ բովանդակությունն ունի. մի ոք իշխեցէ մերձենալ ի սմա. Նզովեալ եղիցի ի Ղէ. այ:

Այս վերջին տողի նման անսովոր դարձվածքը մատնացույց է անում տապանաքարի տակ թաղվածի հետ կապված մի անսովոր երևույթ։ Մեր կարծիքով դա հետևյալն է. գոյություն ուներ միջին դարերում և մինչև վերջերս էլ պահպանվող մի ավանդություն, ըստ որի պատժամահ մարդկանց չէր թույլատրվում թաղել ընդհանուր գերեզմանատանը։ Մեր կարծիքով, այս գերեզմանաքարի տակ թաղված է Համամ իշխանի եղեռնական ձևով սպանված եղբայրը, որը թաղվել է առանձնակի և տապանագրի մեջ էլ այդպիսի անսովոր դարձվածք է գրվել մի ոք իշխեցէ մերձենալ ի սմա (հայկական տապանագրերի սովորական վերջավորությունն է ած ողորմի, յիշեցէՔ կամ նման մի այլ դարձվածք)։

Տապանագրի մեջ հիշատակված են երեք անձնանուններ, որոնք գրված են սեռական հոլովով և միացված եւ շաղկապով, դրանցից հետևում է, որ այս երեք մարդիկ գտնվելիս են եղել թաղվածի հետ միևնույն ազգակցական կապի մեջ, ավելի որոշ՝ երեք եղբայրներ են, որոնք իրենց ընտանիքի անդամներից մեկի համար տապանաքար են կառուցել (սովորական երևույթ է, երբ ընտանիքի մի ննջեցյալի համար նույն ընտանիքի մի քանի անդամներ են հիշատակում, որպես տապանաքարի կառուցողներ, դրանով շեշտելով բոլորի հարգանքն ու հոգատարությունը)։ Ներկա դեպքում Համամը հիշատակված է իշխան տիտղոսով, իսկ Ֆիլիպէն և Սմբատը տէր: Դա հասկանալի է. ֆեոդալական երարխիայի ճիշտ կիրառումն է մատնանշված Համամի վերաբերյալ. դա և՛ ֆիզիկական ավագություն է, և՛ իրական իշխողի ով լինելն ապացուցող, մինչդեռ մյուս երկուսը ընդհանրապես տէր են։

Հնարավոր է ենթադրել նաև, որ երեք եղբայրներով տապանաքարը շինել են տվել իրենց ընտանիքի մի այլ անդամի համար, ասենք հոր, մոր կամ քրոջ։ Բայց, արձանագրության վերջին տողի անսովոր բովանդակությունը բացառում է նման ենթադրությունը և մնում է միայն ենթադրել, որ տրագիկ կերպով մահացածը նրանց եղբայրն է։ Այս դեպքում արձանագրության առաջին տողի վնասված մասում Համամ իշխանի բառերից առաջ պետք է դնել եղբաւր բառը:

Այս բոլորից հետո տապանագիրը կունենա հետևյալ տեսքը.

1. Այս դ|իր դամբանի . . . . եղբաւր Հ|ամամ իշխանի

2. Եւ տն Փղիպէի եւ ան Սմպատա . . . . զրկ-

3. եալ ի Նորտ ճասակէ ելա յաշխարհէս. դառն թ|ողի սուգ|զգրիսզայս

4. մի ոք իշխեցէ մերձենալ ի սմա Նզովեալ եղիցի ի Ղէ այ:

Կատարված դեպքի թվականը հեշտությամբ որոշվում է Բուղայի կառավարչության ժամանակով։ Ինչպես հայտնի է Բուղան որպես կառավարիչ արենլք եկավ 852 թ.։ 854—855-ին կռիվներ են տեղի ունեցել Աղվանքում և 856 թ. նա արդեն ետ կանչվեց խալիֆաթի կողմից։ Այսպիսով, պարզ է, որ դեպքը տեղի է ունեցել 854—855 թթ.։ Անհայտ են մնում դրա դրդապատճառները։ Արձանագրության մեջ մի նախադասություն կա, որը առնչվում է այս խնդրին։ Դա զրկեալ ի Նորտ ճասակէ ելա յաշխարհէս պարբերությունն է, որտեղ հիշատակված Նորտ բառը գործածված է պատանի կամ երիտասարդ իմաստով։ Ուրեմն Համամի եղբայրը իրենից փոքր էր, որովհետև 885 թ. Համամն արդեն իրենց տոհմի ավագը պիտի լիներ, որ իրավունք ունենար կոչվելու իշխան։ Հետևապես կարելի է ենթադրել, որ դեպքն իշխանությունն իր տոհմի ներսում յուրացնելու նպատակով չի կատարվել։

Այս տապանագիրը չնայած խոշոր պատմական նորություններ չի հայտնում, բայց քանի որ Համամ իշխանի, այդ նշանավոր պետական գործչի ինքնության մասին մեր ունեցած տեղեկությունները շատ չնչին են, այն որոշ արժեք է ներկայացնում։ Տապանագիրը հաստատում է, որ Համամն, իրոք, սպանել է իր եղբորը, որ սպանված եղբայրը Համամից փոքր է եղել, որ Համամը դրանից բացի ունեցել է նաև երկու այլ եղբայր՝ Ֆիլիպէ և Սմբատ անուններով, որ Համամի տոհմի կենտրոնավայրը եղել է ներկայիս Ազդամի շրջանը՝ Պարտավ-Բերդա և Տիգրանակերտ ավանը կամ քաղաքը, որ Համամին մեզ անհայտ քաղաքական պատճառներով հաջորդել են ոչ թե եղբայրները, այլ թոռը։

С. Бархударян

ЭПИТАФИЯ НА КНЯЗЯ НАМАМ'А

(Резюме)

В Государственном Историческом Музее Азербайджана хранится двухскатный надгробный камень, расколотый на две части с армянской надписью (эпитафией) в четыре строки: камень обнаружен во время раскопок археологом Ваидовым, в развалинах Гявур кала, около селения Софулу Ахдамского района. По сообщениям историка VII в. Себеоса и описанию современных путешественников данные развалины являются остатками древнего города Тигранакерт.

Надпись повествует, что князь Hamam и его братья Филипп и Смбат возвели надгробную плиту на младшего брата, имя которого к сожалению не читается.

Надгробная плита и эпитафия вносят следующие дополнительные сведения о Համամе и его роде: 1. Центр воссозданого Hamam'om государства стал Гявур кала—Тигранакерт. 2. У Hamam'a кроме убитого были еще два брата—Филипп и Смбат.